Республика Армения ООО
«НАХАГЦЕРИ
ПОРДЗАКННУТЮН»

Republic of Armenia
«NAKHAGTSERI
PORDZAQNNUTYUN» LLC

Հայաստանի Հանրապետություն

«ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

---

1-20/25-6

13.12.2024թ.

*Լիցենզիա ՔՊԼ-001434*

*Լիցենզիա ՔՊԼ-001139*

**Նախագծային կազմակերպություն՝** «ԱՐՄՍՏՐՈՅ» ՍՊԸ

**Տնօրեն՝** Ա. Առաքելյան

# ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՍԼԱՆՅԱՆ ՓՈՂՈՑԻ ՆՈՐ ԱՍՖԱԼՏԱՊԱՏ ՀԱՏՎԱԾԻՑ ՄԻՆՉԵՎ ԳԱՆՁԱՔԱՐ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՍԿԶԲՆԱՄԱՍՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՄԻՆՉԵՎ ԿԱՄՈՒՐՋ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ

Երաշխավորվում է ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի Ասլանյան փողոցի նոր ասֆալտապատ հատվածից մինչև Գանձաքար վարչական բնակավայրի սկզբնամասում գտնվող մինչև կամուրջ ասֆալտապատման աշխատանքների նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին: Նախահաշվային արժեքը կազմում է 262519.44 հազ. ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն:

ՏՆՕՐԵՆ՝ Ա.ԾԱՏՈՒՐՅԱՆ

Նախագծման հիմք են ծառայել՝

- Նախագծման թույլտվություն

Փորձաքննության է ներկայացվել նախագիծ կազմված 2 ալբոմից

Գիրք 1- Ճարտարապետաշինարարական մաս

Գիրք 2 – Նախահաշիվ

**Ճարտարապետաշինարարական մաս**

ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի Այգեհովիտ փողոցի նոր ասֆալտապատ հատվածից մինչև Գանձաքար վարչական բնակավայրի սկզբնամասում գտնվող մինչև կամուրջ ասֆալտապատման աշխատանքներ ՊԿ0+00-ՊԿ12+55 կատարվել է «ԱՐՄՍՏՐՈՅԵ ՍՊԸ-ի կողմից:

Նախագծի համար հիմք են հանդիսացել հետևյալ նորմատիվատեխնիկական փաստաթղթերը. ՀՀՇՆ 32-01-2022 «Ավտոմոբիլային ճանապարհներ», ՀՀՇՆ 13-02-2022 «Անվտանգության տեխնիկան շինարարությունում» և ՀՀՇՆ I-3.01.01-2008 «Շինարարական արտադրության կազմակերպում», ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում», ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն», ՀՀՇՆ 52-01-«Բետոնե և երկաթբետոնե կոնստրուկցիաներ», ՀՀՇՆ 40-01.03-2022 «Կոյուղի. Արտաքին ցանցեր և կառուցվածքներ» և ՀՀՇՆ 30-02-2022 «Տարածքի բարեկարգում» նորմերը:

Նախագծային աշխատանքները կատարվել են ՀՀՇՆ 32-01-2022 «Ավտոմոբիլային ճանապարհներ» և ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն, քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմաների և պահանջների համաձայն, AutoCad համակարգչային ծրագրով:

Ըստ տեխնիկական առաջադրանքի պահանջվում է ճանապարհի պարամետրերը /երթևեկելի մասի, կողնակների լայնությունները/ թողնել անփոփոխ, իրականացնել միայն վերականգնման աշխատանքներ:

Նախագծման ընթացքում ընտրված են հետևյալ հիմնական տեխնիկական ցուցանիշներ.

- Շարժման արագությունը - 40 կմ /ժամ
- Ճանապարհների կարգը անփոփոխ
- Երթևեկելի մասի լայնությունը - ընդունված է պահպանելով գոյություն ունեցող /առկա են շենքեր, շինություններ և սեփականաշնորհված տարածքներ
- Շարժման գոտիների քանակը՝ երկու

Հիմնվելով ակնադիտական, երկրաբանական, շրջակա միջավայրի պահպանության միջոցառումների ուսումնասիրությունների վրա, նախագծով նախատեսվում է իրականացնել հետևյալ աշխատանքները.

- Համահարթեցնել հողային պաստառը
- Վերականգնել ճանապարհային պատվածքը
- Իրականացնել ճանապարհի կահավորում:

Հետախուզական աշխատանքների ժամանակ կատարվել է տախիոմետրական հանույթ 1:1000 մասշտաբի:

Հատակագծում հորիզոնական կորերի շառավիղները ընտրված է հաշվի առնելով երթևեկելի մասի անփոփոխ մնալու պահանջը:

Երկայնական կտրվածքում կատարված են մասնակի երկայնական թեքությունների ուղղում:

Հողային պաստառից մակերևույթային ջրերի հեռացում իրականացնել:

Նոր ա/բ ծածկի տեղադրումից հետո իրականացնել երթևեկության անվտանգության կազմակերպման աշխատանքներ:

Նախագծում ընդունված հողային պաստառի կոնստրուկցիան և տիպերը բավարարում են գործող նորմերին և պահանջներին:

Տեղանքի ռելիեֆի պայմաններից և բնահողերի բնութագրերից ելնելով հողային պաստառի կայունությունը հնարավոր է ապահովել կառուցման կանոնների և ջրահեռացման պահանջների պահպանման դեպքում: Հաշվի առնելով ,որ ճանապարհի տակի գրունտը կավային է նպատակահարմար է զտնվել փոխարինել քարային լիցքով, որից հետո նոր տեղադրել ճանապարհի պատվածքը

Ընդհանուր հանույթը կազմում է – IV (5.4) – 3456 մ³

լիցքի ծավալը կազմում է - 324մ$^3$

<<Արմստրոյ>> ՍՊԸ-ի մասնագետների կողմից կատարվել է վերը նշված ճանապարհահատվածի գոյություն ունեցող ծածկի ուսումնասիրություն:

Համապատասխան լաբորատոր կազմակերպության կողմից /կցվում է/ կատարվել է ծածկի շերտերի լաբորատոր հորատումներ: Լաբորատոր փորձարկումների արդյունքների հիման վրա նախատեսվել է իրականացնել նոր պատվածք որի կոնստրուկցիան հետևյան է.

- Խճային շերտ բիտումի տարածումով 4.12տ/1000մ2 h=16սմ

- Ավազակոպճային հիմք h-12սմ

- Մանրահատիկ ա/բ h=4սմ (B տիպ)

- Խոշորահատիկ ա/բ h=6սմ

Ջրահեռացումն իրականացվում է նոր կառուցվող կողային վաքերով:

Հիմնանորոգվող տեղամասը հարակցում է ուղիներ և մուտքեր, որտեղ նախատեսվում է իրականացնել հետևյալ տիպի պատվածք.

Խճավազային խարնուրդ C5 h -15սմ հաստությամբ,

տաք մանրահատիկ ա/բետոն h-5սմ հաստությամբ :

Նախագիծը կազմված է ՀՀՇՆ IV-11.05.02-99 նորմաների և պահանջներին համապատասխան, որից ելնելով մշակված են կոմպլեքս միջոցառումներ երթևեկության անվտանգությունը ապահովելու համար:

Երթևեկության անվտանգության և վարորդի կողմնորոշման համար նախագծով նախատեսված է տեղադրել ճանապարհային նշաններ և կատարել ճանապարհի գծանշում,որոնք ներկայացված են համապատասխան ամփոփագրերում և փռված հատակագծում 1:1000 մասշտաբի:

Այն տեղամասերում, որտեղ բացակայում են ճանապարհային նշանները նախատեսվում է տեղադրել ԳՕՍՏ Ռ 52290-2004-ի: Նախագծում նախատեսված է տեղադրել հետևյալ ճանապարհային նշաններ

- Լրացուցիչ տեղեկատվության 2 հատ

- Առավելության 17հատ

- Նախազգուշացնող 22հատ

Նախագծով նախատեսված է իրականացնել ճանապարհի երթևեկելի մասի գծանշում ռեֆլեկտորային ներկով՝ ըստ նորմերի։

<u>Նախահաշիվ</u>

Նախահաշիվը կազմված է աշխատանքային նախագծի ծավալների հիման վրա և համաձայն ՀՀ կառավարության 23 հունիսի 2011 թվականի N 879-Ն որոշման ։ Հաշվարկման հիմք են հանդիսանում 1984 թ. գները և նորմերը, որոնց վրա կիրառվել են հետևյալ գործակիցները՝

| | |
|---|---|
| - Հիմնական աշխատավարձ | 2.33365 |
| - Մեքենաների շահագործում | 3.03735 |

Նյութերի գները վերցված են ՀՀ ֆինանսների նախարարության 12.2024թ. ինֆորմացիոն տեղեկագրից, նրանց վրա կիրառելով հետևյալ գործակիցները՝

| | |
|---|---|
| - Նյութերի տեղափոխման ծախսեր | 1,132 |
| - Այլ նյութեր | 1,05 |
| - Պահեստավորման ծախսեր | 1,02 |
| Միջին ամսեկան աշխատավարձի չափ է ընդունվել | 252618 դրամ |

Նախահաշվում հաշվարկված է նաև՝

| | |
|---|---|
| - Վերադիր ծախսեր | 13,3% |
| - Շահույթ | 11% |
| - Ա.Ա.Հ | 20% |

Նախահաշվում հաշվարկված են նաև համապատասխան լիմիտավորված ծախսեր։

Դիտարկելով փորձաքննության ներկայացված նյութերը «Նախագծերի փորձաքննություն» ՍՊԸ-ն նշում է , որ՝

1. Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին: Համայնքապետարանին առաջարկվել է տրամադրել ճարտարապետահատակագծային առաջադրանքները:
2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան:
3. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները այլընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կամզակերպության հետ համատեղ:

Ելնելով վերը նշվածից «Նախագծերի փորձաքննություն» ՍՊԸ-ի փորձաքննությունը <u>ԵԶՐԱԿԱՑՆՈՒՄ է</u>, Երաշխավորվում է նախագծային փաստաթղթերի համապատասխանությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին և <u>ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ Է ՀԱՍՏԱՏՄԱՆ:</u>

Փորձագետ՝ Ա.Հարությունյան